

ՀՏԴ 93/94

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

**Կ. ՊՈԼՍԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԻՎ 1185 ՕԹՅԱԿԸ  
Մովսիսյան Ֆ. Վ.**

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Թուրքիայում հնարավոր դարձավ վերականգնել մասոնական օթյակների գործունեությունը և հիմնել նոր օթյակներ: Օգտվելով այդ հնարավորությունից՝ մի խումբ հայ ազատ որմնադիրներ, ովքեր աշխարհամարտից առաջ անգլիական և ֆրանսիական օթյակների անդամ էին, Կ. Պոլսում 1918 թ. դեկտեմբերին հիմնեցին «Հայաստան» թիվ 1185 հայկական օթյակը: Հայ մասոնության պատմության մեջ «Հայաստան» օթյակը հանդիսացել է մինչ այդ հիմնված օթյակներից միակը, որը համալրված էր բացառապես հայերից, այդ թվում՝ հոգևորականներից, արգելվում էր թուրքերի անդամակցությունը: Օթյակն իր աշխատանքներն իրականացնում էր հայոց եռագույն դրոշի ներքո: Հայ ազատ որմնադրության երկնակամարում գիսաստղի պես փայլատակած այս եզակի օթյակը 1925 թ. հարկադրված դադարեցրել է գործունեությունը:

**Բանալի բառեր.** Առաջին աշխարհամարտ, Կ. Պոլիս, մասոնություն, «Շոտլանդիայի Մեծ օթյակ», «Հայաստան» օթյակ, հայոց եռագույն:

**Նախաբան:** Հայ պատմագրությունում դեռևս հիմնովին ուսումնասիրված չէ հայկական մասոնական օթյակների պատմությունը և դրանց անդամագրված երևելի անդամների գործունեությունը: Այս իմաստով բացառություն չէ նաև Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Կ. Պոլսի Բերա թաղամասում հիմնված հայ ազատ որմնադրության պատմության մեջ թվով չորրորդ հայկական «Հայաստան» թիվ 1185 օթյակը: Բավական ինքնատիպ այս օթյակի մասին քիչ բան է հայտնի, որը պայմանավորված է մեզ հասած նյութերի խիստ սակավությամբ: Օթյակի մասին սահմանափակ, բայց

միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ է տալիս օթյակի Գերհարգելի Վարպետներից Արմենակ Ֆեներճյանը՝ Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրում: Հայ պատմագիտության համար «Հայաստան» թիվ 1185 օթյակի պատմության ուսումնասիրությունը խիստ արդիական է հետևյալ առումներով. առաջին՝ «Հայաստան» թիվ 1185 օթյակը դարձավ 19-րդ դարի երկրորդ կեսում Զմյուռնիայում հիմնված հայկական «Տիգրան» թիվ 1014, Կ. Պոլսի «Մեր» և Խարբերդի «Եփրատ» թիվ 1078 օթյակների մասոնական գործունեության արժանի շարունակողը՝ մասոնության հիմնարար գաղափարների տարածման ուղղությամբ: Երկրորդ՝ «Հայաստան» անունով հայկական օթյակ ունենալու անհրաժեշտության վկայություն է այն փաստը, որ 1994թ. դեկտեմբերին Ամերիկայի Միացյալ Նահանգներում «Կոլումբիայի օկրուգի Մեծ օթյակի» հայ անդամները հիմնեցին «Հայաստան» թիվ 94 օթյակը: Երրորդ՝ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում «Հայոց գերագույն օթյակի» հովանավորությամբ գործում են 11 օթյակներ, որոնք իրենց շարքերում համալրում են 200-ից ավելի հայ ազատ որմնադիրների<sup>1</sup>: Նրանք շարունակում են անցյալում աշխարհի տարբեր երկրներում հիմնված հայկական օթյակների և հայ ազատ որմնադիրների մասոնական լավագույն ավանդույթները, որն ուսումնասիրության առանձին նյութ է:

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում մասոնական օթյակները դադարեցրին իրենց գործունեությունը: Նրանք աշխատանքները վերսկսեցին միայն 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի զինադադարից հետո, երբ դրա համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Մուղրոսի զինադադարից հետո թուրքական որևէ օթյակ չէր աշխատում: Իրենց գործունեությունը վերսկսեցին բացառապես Կ.Պոլսում հիմնված եվրոպական օթյակները, մասնավորապես՝ անգլիական «Արևելյան» («Oriental») թիվ 687, իտալական «Վերածնված Բյուզանդիա» («Byzanzia risorta»), հունական «Ներդաշնակության» («Harmonia») և ֆրանսիական «Վերածնունդ» («La renaissance») օթյակները:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Թուրքիայում նպաստավոր քաղաքական պայմաններ ստեղծվեցին հայկական մասոնական նոր օթյակ ստեղծելու համար: Հայ ազատ որմնադրությունը

---

<sup>1</sup> [www.mediamax.am/am/news/interviews/10590](http://www.mediamax.am/am/news/interviews/10590)

«կրկին փինիկի նման անգամ մը, եւս հոգի կառնէ Թուրքիոյ մէջ»<sup>2</sup>: Դրա վկայությունը 1918 թ. դեկտեմբերի 4-ին հայ ազատ որմնադիրների Կ. Պոլսում հիմնած «Հայաստան» թիվ 1185 օթյակն է: Օթյակի 10 հիմնադիրները պատերազմից առաջ անդամագրվել էին Թուրքիայում գործող ֆրանսիական և անգլիական օթյակների: Նրանցից Կ.Պոլսի «Թուրքիա» («La Turguie») ֆրանսախոս օթյակին 1909 թ. անդամագրվել էին Թորգոմ Պոյաճյանը և Արմենակ Ֆեներճյանը, իսկ 1910 թ.՝ Պողոս Ալանը, Հրանտ Տողրամաճյանը, Երվանդ Բեքմեզյանը, Բարունակ Սաղաքյանը և Երվանդ Սարյանը: «Թուրքիա» օթյակը հիմնվել էր Էդինբուրգի «Շոտլանդական Մեծ օթյակի» արտոնագրով և գործում էր նրա հովանու ներքո<sup>3</sup>: «Հայաստան» օթյակի մյուս հիմնադիրները՝ Արշակ Փափագյանը, Մինաս Մարտիրոսյանը և Վահան Պեշիրյանը ներկայացնում էին անգլիական «Էշթոն Իգերթոն» («Ashton Eagerton») օթյակը, որին անդամագրվել էին 1912 թվականին: Հիմնադիր անդամների առաջին նիստը տեղի է ունեցել 1918 թ. դեկտեմբերի 2-ին Կ. Պոլսում՝ ֆրանսախոս «Թուրքիա» թիվ 1045 օթյակի քարտուղար Արմենակ Ֆեներճյանի գրասենյակում: Նրանք որոշել են իրենց օթյակը կոչել «Հայաստան» և գործել «Շոտլանդիայի Մեծ օթյակի» հովանու ներքո: Այդ նպատակով նրանք դեկտեմբերի 2-ին նամակ հղեցին «Շոտլանդիայի Մեծ օթյակի» քարտուղար Դեյվիդ Ռիդին: Նամակում իրենց եղբայրական շնորհավորանքները և ողջույններն էին հղում Մեծ Բրիտանիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի, ինչպես նաև համայն աշխարհի ազատ որմնադիրներին Առաջին աշխարհամարտի ավարտի կապակցությամբ: Նրանք, մասոնական գաղափարախոսությամբ, պատերազմի ավարտը համարում էին «արդարության մեծ հաղթանակ... որը ձեռք բերուեցաւ տիեզերական համաշխարհային արինահեղ պատերազմին մէջ՝ բռնակալութեան ոճրագործ տիրապետութեան վրայ»<sup>4</sup>: Հայ ազատ որմնադիրները նամակում միաժամանակ հատուկ ընդգծում էին պատերազմի տարիներին հայ ժողովրդի ունեցած «անօրինակ տառապանքները և անհուն կորուստները»: Կարևորվում էր

<sup>2</sup> Ֆեներճեան Ա., Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ. «Սէր» օթեակը.-«Հայրենիք», Բոստոն, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94:

<sup>3</sup> Ֆեներճեան Ա., Ազատ որմնադրութիւնը Սօտաւոր Արեւելքի մէջ, - «Կեանք եւ Արուեստ», Տարեգիրք Ե տարի, Փարիզ, 1935, էջ 77, Ֆեներճեան Ա., Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ, «Սէր» օթյակը, - «Հայրենիք», Բոստոն, 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 94:

<sup>4</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 95:

«անկախ Հայաստանի» ստեղծումը, որը հայ մասունները համարում էին «ազգային բաղձանք» և դրան հասնելու համար ակնկալում էին «Շոտլանդիայի Մեծ օթյակի» «բարյացակամ օժանդակությունը»<sup>5</sup>: Որոշվեց պաշտոնապես դիմել «Շոտլանդիայի Մեծ օթյակին», որպեսզի ազատ որմնադրության սկզբունքների հիման վրա թույլատրվի ստեղծել հայկական օթյակ, որը կունենա «իր պատուաբեր դիրքն յօգուտ հայ ազգին»<sup>6</sup>, գոյություն ունեցող հազարավոր անգլիական, շոտլանդական, ամերիկյան, ֆրանսիական և այլ ազատ որմնադիրների քույր օթյակների շարքում: Դեկտեմբերի 4-ին Ա. Ֆեներձյանի գրասենյակում տեղի ունեցավ հայկական օթյակի հիմնադրման արարողությունը<sup>7</sup>: Օթյակի հիմնադիր անդամները խնդրեցին Թորգոմ Պոյաճյանին անգլերենից հայերեն թարգմանել շոտլանդական կանոնակարգով նախատեսված ծեսերն ու արարողությունները, որպեսզի իրենց գործունեությունում առաջնորդվեն դրանցով: Թ. Պոյաճյանը կատարեց իր մասն եղբայրների խնդրանքը և 1919 թ. Կ.Պոլսում հրատարակեց «Ներքին կանոնագիր եւ պարտաւորութիւնք Հայաստան թ. 1185 օթյակի», որը վավերացրել էր Շոտլանդական գերագույն օթյակը: Հայ մասնության պատմության մեջ սա եզակի դեպք է, երբ օթյակը տպագրում էր իր կանոնադրությունը: Մինչ այդ հիմնված հայկական օթյակներից ոչ մեկը իր ներքին կանոնադրությունը չէր հրատարակել: Դեկտեմբերի 4-ին նիստում որոշվեց նաև ներկա գտնվող հիմնադիր անդամներից ձևավորել օթյակի ղեկավարություն: Քվեարկության արդյունքում միաձայն «Հայաստան» թիվ 1185 օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ ընտրվեց Թորգոմ Պոյաճյանը, Մեծ Վերահսկող՝ Երվանդ Մարյանը, Կրտսեր Վերահսկող՝ Պողոս Ալանը, քարտուղար՝ Արմենակ Ֆեներձյանը, գանձապետ՝ Երվանդ Բեքմեզյանը, կրտսեր սարկավագ՝ Հրանտ Տողրամաճյանը, ներքին պահապան՝ Արշակ Փափազյանը և արտաքին պահապան՝ Բարունակ Մաղաթյանը<sup>8</sup>: Օթյակի անդամների համար պարտադիր համարվեց ծիսական արարողությունների և աշխատանքային գործունեության ընթացքում սև հագուստ կրելը:

1918 թ. դեկտեմբերի 18-ին «Հայաստան» օթյակի անդամները երկրորդ անգամ ժողով հրավիրեցին: Մինչ «Շոտլանդիայի Մեծ

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 77

<sup>8</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 95:

օթյակից» հավաստագիր ստանալը որոշվեց օթյակի աշխատանքները ղեկավարելու համար ստեղծել ժամանակավոր դիվան՝ ստենապետ Թ. Պոյաճյան, գանձապետ՝ Ե. Բեքմեզյան և քարտուղար՝ Ա. Ֆեներճյան կազմով: Օթյակի քարտուղար Ա. Ֆեներճյանը ներկաներին տեղեկացրեց, որ ինքը պատերազմի ավարտի կապակցությամբ, բացի «Շոտլանդիայի Մեծ օթյակից», շնորհավորական նամակներ է հղել նաև Փարիզի երկու օթյակներին, «Իտալիայի Մեծ Արևելք» և «Հունաստանի Մեծ օթյակին»: Ներկաները նրան շնորհակալություն հայտնեցին այդ ծառայության համար:

1918 թ. դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ օթյակի հերթական նիստը, որը քննարկեց «Շոտլանդիայի Մեծ օթյակին» ներկայացվելիք խնդրագիրը: Անգլերեն խնդրագիրը ներկայացրեց օթյակի անդամ Արշակ Փափազյանը, որն աննշան խմբագրական փոփոխություններով ընդունվեց: Օթյակի քարտուղար Ա. Ֆեներճյանին հանձնարարվեց խնդրագրի խմբագրված տեքստը մեքենագրել և ստորագրել տալ օթյակի բոլոր անդամներին: 1919 թ. մայիսի 1-ին «Շոտլանդիայի Մեծ օթյակը» պաշտոնապես վավերացրեց «Հայաստան» օթյակի խնդրանքը և նրան շնորհեց իր արտոնագիրը: «Հայաստան» օթյակն այդ կապակցությամբ հունիսի 12-ին ժողով հրավիրեց, որի ժամանակ որոշվեց շնորհակալական նամակ ուղղել մայր օթյակի քարտուղարին:

1919 թ. հունիսի 26-ին «Հայաստան» օթյակի ղեկավարությունը մի շարք հարցերի պարզաբանման նպատակով «Շոտլանդիայի Մեծ օթյակին» դիմել է հերթական խնդրագրով: 1919 թ. դեկտեմբերի 3-ին «Շոտլանդիայի Մեծ օթյակը» հայ մասունական օթյակին տվել է մի քանի հանձնարարականներ: Մասնավորապես՝ «Հայաստան» օթյակին պարզաբանվել է, որ այն հայերը, ովքեր թուրքական տարբեր օթյակներում ստացել են ազատ որմնադրի առաջին, երկրորդ և երրորդ աստիճան, չեն կարող ընդունվել «Հայաստան» օթյակի մեջ որպես անդամ: «Շոտլանդիայի Մեծ օթյակի» գլխավոր քարտուղարը հայ մասուններին ակնարկում էր «Թուրքիայի Մեծ Արևելք» («Grand Orient of Turkey») օթյակը, որի առաջին Գերհարգելի Վարպետը հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ, ներքին գործերի նախարար, մեծ եպարքոս Թալեաթ փաշան էր<sup>9</sup>: Գլխավոր քարտուղարը

<sup>9</sup> Թալեաթ փաշա (1874-1921) ոչ միայն պետական գործիչ էր և «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կուսակցության պարագլուխներից մեկը, այլև բարձրաստիճան մասոն: Նա 1890-ական թվականների վերջին «Վերածնված Մակեդոնիա» («Makedonia Rizorta») օթյակի անդամ էր, 1908 թ. դարձավ «Երիտասարդ

պարզաբանում էր, որ ովքեր ցանկություն են հայտնում անդամագրվելու «Հայաստան» օթյակին, պարտավոր են օթյակին դիմել սահմանված կարգով և ստանալ պատշաճ պատասխան: «Շոտլանդիայի Մեծ օթյակի» մեծ քարտուղարը հայ մասունների ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ թուրքական օթյակների հայ անդամները չեն կարող անդամագրվել հայկական օթյակին իրենց ունեցած աստիճանով և ակնկալել աստիճանի բարձրացում: Այդպիսի ցանկություն ունեցող մարդիկ կարող են «Հայաստան» օթյակի անդամ դառնալ միայն ընդհանուր հիմունքներով: Շոտլանդական օթյակի քարտուղարը միաժամանակ հրահանգում էր, որ «Թուրքիայի Մեծ օթյակին» պատկանող որևէ մարմին իր անդամներով չի կարող ճանաչվել «Հայաստան» օթյակի կանոնավոր մարմինը, հետևաբար չի կարող ընդունվել «Հայաստան» օթյակի մեջ: Առաջնորդվելով նույն սկզբունքով՝ «Հայաստան» օթյակի անդամներին չէր թույլատրվում իրականացնել մասունական որևէ գործողություն կամ հարաբերություն այդ մարմնի հետ<sup>10</sup>:

Այս հանձնարարականները բխում էին «Հայաստան» օթյակի անդամների շահերից և ամբողջովին համապատասխանում էին նրանց դիրքորոշմանը: Հայ ազատ որմնադիրները քաջատեղյակ էին, որ 1915 թ. հայության զանգվածային կոտորածների և եղեռնագործության գլխավոր գաղափարախոսները և կազմակերպիչները Թալեաթ փաշայի գլխավորած «Երիտասարդ Թուրքիա» և «Թուրքիայի Մեծ Արևելք» մասունական օթյակների բարձրաստիճան անդամներն էին, ովքեր «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներն էին<sup>11</sup>: «Հայաստան» օթյակի անդամները նաև իրագեկ էին, որ Մեծ

---

Թուրքիա» օթյակի Մեծ Վարպետ, իսկ 1909 թ. օգոստոսին ընտրվեց «Թուրքիայի Մեծ Արևելք» օթյակի Մեծ Վարպետ, որը Թուրքիայի անտեսանելի կառավարությունն էր: Sté u Heyd Uriel. *Foundation of Turkish Nationalism*, London, 1950, p. 98; Walker Christopher. *Armenia: The Survival of Nation*, New York, 1980, p. 344; Robinson Richard. *The First Turkish Republic. A case study in National Development*, Cambridge, 1963, p. 27; Boyajyan Dickran. *Armenia: The Case for a Forgotten Genocide*, Westwood, New Jersey, 1972, p. 98, Ղազարյան Հ., Ցեղասպան թուրքը, Պէրյութ, 1968, էջ 316-317, Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, գիրք առաջին, էջ 242:

<sup>10</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 96:

<sup>11</sup> Sté u H.C. Armstrong. *Gray Wolf. The Life of Kemal Ataturk*. New York, 1961, p. 20; В. Кряжин. Политические группировки Турции. Младотурки.- «Новый восток», М., 1923, № 1, с. 35; Ռ. Բինոն, Հայերու բնաջնջումը. Գերմանական մեթոտ-թրքական գործելակերպ,

եղեռնի զոհ են դարձել իրենց մասոն եղբայրները, մասնավորապես՝ «Մապահ» թերթի խմբագիր, Գերհարգելի Վարպետ Տիրան Քելեկյանը<sup>12</sup>, թուրքական օթյակների անդամ, մեջլիսի պատգամավոր, գրող Գրիգոր Ջոհրապը, դաշնակցական գործիչ Վարդգես Մերինգյուլյանը<sup>13</sup> և ուրիշներ:

1920 թ. հոկտեմբերի 18-ի երկուշաբթի օրը՝ ժամը 20 անց 30-ին, Կ. Պոլսի Բերա թաղամասի Քուլոլու փողոցի թիվ 1 տանը տեղի է ունեցել «Հայաստան» օթյակի հանդիսավոր բացումը: Բացման արարողությանը ներկա էին 200-ից ավելի հյուրեր: Հանդիսավոր արարողությունը ղեկավարել է Կ.Պոլսի «Արևելյան» («Oriental») թիվ 687 օթյակի նախկին Գերհարգելի Վարպետ անգլիացի Փերսի Լիթը<sup>14</sup>: «Հայաստան» օթյակը հայ ազատ որմնադրության պատմության մեջ հանդիսանում է մինչ այդ հիմնված հայկական օթյակներից միակը, որն իր աշխատանքները տանում էր Հայաստանի առաջին հանրապետության եռագույն դրոշի առկայության պայմաններում<sup>15</sup>: «Հայաստան» թիվ 1185 օթյակը հայկական մյուս օթյակներից առանձնանում է նաև նրանով, որ եղել է բացառապես հայ ազատ որմնադիրներից կազմված ամենամեծաքանակ անդամ ունեցող օթյակը: Օթյակի անդամների քանակի մասին միակ տեղեկությունը հայտնած Արմենակ Ֆեներջյանը տարբեր թվեր է ներկայացնում: Նա «Կեանք և Արվեստ» ամսագրում օթյակի հայ անդամների թիվը ներկայացնում է 125 մարդ<sup>16</sup>, իսկ «Հայրենիք» ամսագրում տպագրած հոդվածում գրում է, որ օթյակը «ունեցած է հարյուրի մոտ անդամներ»<sup>17</sup>: Իր գործունեության տարիներին «Հայաստան» օթյակն ունեցել է վեց Գերհարգելի Վարպետ՝ Թորգոմ Պոյաճյան, Մինաս Մարտիրոսյան, Արմենակ Ֆեներճյան, Տիգրան Պարսամյան, Վահե Հինդյան և Լևոն Ճգնավորյան<sup>18</sup>: Օթյակի

---

Կ.Պոլիս, 1919, էջ 49, Բ. Մելլան Զադե, Օսմանյան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրգիրները, Պէրոյթ, 1968:

<sup>12</sup> «Հայրենիք», 1955, դեկտեմբեր, թիվ 12, էջ 81:

<sup>13</sup> Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 323-324, գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 74:

<sup>14</sup> «Կեանք և Արուեստ», 1935, էջ 77, «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 97-98:

<sup>15</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 97:

<sup>16</sup> Տե՛ս «Կեանք և Արուեստ», 1935, էջ 78:

<sup>17</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 98:

<sup>18</sup> Նույն տեղում:

ղեկավարման տարիներին նրանք «խիստ փայլուն գործունեություն»<sup>19</sup> ծավալեցին:

«Հայաստան» թիվ 1185 օթյակը Թուրքիայում գործած միակ օթյակն է, որին աշխարհիկ մարդկանցից զատ անդամագրվել էին նաև հոգևորականներ: Նրանցից առաջինը օթյակի անդամ է ձեռնադրվել Հովհան Ծայրագույն վարդապետ Կարապետյանը: Նա «Հայաստանի կոչնակ» թերթի 1924 թ. հոկտեմբերի 4-ի համարում «Գիտակից սեր» վերնագրով մաղթանք է հղել «Հայաստան» օթյակին:

Ինը քառատողից բաղկացած այդ բանաստեղծության մեջ հեղինակը ցանկություն է հայտնում «սիրել Տիեզերքն անհուն, անբաժան ընկեր ըլլալ աստղերուն, ... սիրել մարդկությանն ամբողջ, լսել օգնութեան ընդհանուր կոչ, ... սիրել գեղարվեստն անճառ, գիտութեան ակէն սերտել անխափան՝ Աստուածացումի լուսաշող ճամբան»: Ի պատասխան այս ցանկության՝ մի ձայն նրան ասում է. եթե ցանկանում ես սիրել Տիեզերքն անհուն, ապա «սիրէ նախապես քու հայրենի տուն», եթե ցանկանում ես սիրել մարդկությունն ամբողջ, ապա «սիրէ իսկապես եղբայրդ ողբակոծ», և եթե ցանկանում ես սիրել գեղարվեստն անճառ, ապա ամենից առաջ «սիրէ ջերմապես պարզ կեանքը տիպար»: Անսալով այդ ձայնի խորհրդին՝ հեղինակն այնուհետև գրում է.

«Անկեղծ պաշտումով սիրեցի իմ տուն,  
Ըսի օտարին. «Ալ եղբայր ես դուն»,  
Կեանքի ուղիեն վազեցի առաջ,  
Եւ անձնանուէր ծառայութեան մէջ,  
Գտայ հոգեկան տաճարներ անշեջ»<sup>20</sup>:

Հովհան վարդապետ Կարապետյանի բանաստեղծությունն իր վրա կրում է մասոնական գաղափարախոսության մի շարք հիմնարար դրույթների ազդեցությունը: Դրանք ամրագրված են «մասոնության պատմահայր»<sup>21</sup> Ջեյմս Անդերսոնի<sup>22</sup> «Ազատ որմնադիրների

<sup>19</sup> «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78:

<sup>20</sup> Տե՛ս Յովհան, Գիտակից սեր, - «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1924, 4 հոկտեմբերի, թիվ 40, էջ 1267:

<sup>21</sup> Уайт А. Э. Новая Энциклопедия масонства. Пер. с англ. Санкт-Петербург-Москва-Краснодар, 2003, с. 18.

<sup>22</sup> Ջեյմս Անդերսոն (1680-1739), շոտլանդական պրեսբիտերական եկեղեցու քահանա, աստվածաբան, խորհրդանշանական մասոնության հիմնադիր, բարձրապատիվ մասոն, Լոնդոնի և Վեստմինսթրի մեծ օթյակի Գերհարգելի Վարպետ, 1723թ. հրատարակել է մասոնական օթյակների գործունեությունը կանոնակարգող աշխատանք, որը հայտնի է Անդերսոնի սահմանադրություն անունով: Տե՛ս Ридли Дж. Фримасоны. Люди, творящие мировую историю. Пер. с англ., М., 2007, с. 49; Пэт Морган. Секреты масонов. Пер. с англ., М., 2008, с. 12.



Սահմանադրությունում»<sup>23</sup>, որը համարվում է «մասոնության Աստվածաշունչ»: Մասոնությունը «հոգու վիճակ է»<sup>24</sup>, «իր գեղեցկությամբ սքանչելի բարոյական համակարգ»<sup>25</sup>, անհատի «մշտական կատարելագործման մասին բարոյական ուսմունք»<sup>26</sup>: Մասոնությունը նպատակ է հետապնդում բարոյապես ազնվացնել մարդկանց և միավորել նրանց եղբայրական սիրո, հավասարության, փոխօգնության և հավատարմության հենքի վրա»<sup>27</sup>: Այս դրոյթներն ամրագրված են Հովհան վարդապետ Կարապետյանի՝ «Հայաստան» օթյակին ուղղված մաղթանքի մեջ: Դրա վկայությունը նրա օգտագործած «անհուն Տիեզերք», «անբաժան ընկեր», «մարդկությանն ամբողջ», «եղբայր ես դուն», «փոխադարձ սեր», «կյանքի ուղի», «գեղարվեստն անճառ», «հոգեկան տաճար», «լուսաշող ճամբա» և այլ արտահայտություններն են, որոնցից յուրաքանչյուրը մասոնության գաղափարախոսության և բառապաշարի բաղադրիչ են: Մասոնական գաղափարախոսությունը սահմանում է, որ յուրաքանչյուր մարդ կոչված է ազատ և լիարժեք զարգացնել իր ընդունակությունները, խավարից անցնել դեպի լույս, տգիտությունից՝ դեպի գիտելիքներ, մահից՝ դեպի անմահություն, որը տեղի է ունենում միայն մարդկային ոգու տաճարում կամ մասոնական օթյակում, որտեղ բոլորը եղբայրներ են<sup>28</sup>:

Հովհան վարդապետ Կարապետյանը «Հայաստան» օթյակին անդամագրված միակ հոգևորականը չէր: 1923 թ. հունիսի 4-ի երեկոյան «Հայաստան» օթյակին հանդիսավորությամբ անդամագրվել է Արտավազդ վարդապետ Սյուրմեյանը<sup>29</sup>, որին ներկա են եղել մեծ թվով

<sup>23</sup> Anderson James. The Constitutions of Free-Masons, London, 1723

<sup>24</sup> Финдель И. История франк-масонства, том 1, СПб, 1872, с. 3.

<sup>25</sup> Морамарко М. Масонство в прошлом и настоящем. Пер. с ит., М., 1990, с. 23.

<sup>26</sup> Липский А. Что такое масонство? Масонство и масоны. Сборник статей. Вып. 1, М., 1994, с. 3-11.

<sup>27</sup> Энциклопедический словарь Ф.А. Брокгауза и И. А. Ефрона, том XXXVI А, СПб, 1902, с. 502.

<sup>28</sup> Спаров В. Полная история масонства в одной книге. М., 2010, с. 258-260.

<sup>29</sup> Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը (1889-1951) քսան տարուց ավելի ծառայել է Հալեպի և Բեյրութի Հայաստանյայց եկեղեցուն և տեղի հայ համայնքին: 1946 թ. մեկնել է Փարիզ՝ որպես Հայրապետական լիազոր ներկայացուցիչ՝ վերակազմելու համար Եվրոպայի թեմը: Նա նաև ձեռագրագետ էր, պատմաբան ու բանասեր, հրատարակել և խմբագրել է «Հայ քնար», «Մասուն», «Հայ խոսնակ» պարբերականները, «Տաթև» տարեցույցը: Հեղինակել է պատմագիտական մի շարք երկեր, աշխատակցել «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Հայաստանի կոչնակ», «Էջմիածին» և այլ պարբերականների: Հուղարկավորվել է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը: Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1946, 5 հոկտեմբերի, թիվ 40, էջ 954:

ազատ որմնադիրներ<sup>30</sup>: 1936 թ. նա Հալեյի Քառասուն Մանկանց եկեղեցում պատարագ է մատուցել Անգլիայի մասն թագավոր Ջորջ V-ի<sup>31</sup> մահվան կապակցությամբ, որին ներկա են եղել Անգլիայի հյուպատոսը և օտարերկրյա բազմաթիվ հյուրեր: Նա «Հայաստան» օթյակի նախկին Գերհարգելի Վարպետ Արմենակ Ֆեներճյանին խնդրել է իր կարողացած քարոզը ուղարկել «Անգլիայի Մեծ օթյակին»<sup>32</sup>:

1923 թ. դեկտեմբերի 17-ին «Հայաստան» օթյակի Գերհարգելի Վարպետի պաշտոնում Արմենակ Ֆեներճյանին փոխարինել է Տիգրան Պարսամյանը: Նոր Գերհարգելի Վարպետին Ա. Ֆեներճյանը մաղթանքի խոսք է հղել, որը լի է մասոնական գաղափարախոսության տարբեր դրույթներով: Այն հնարավորություն է տալիս անմիջական պատկերացում կազմել մասոնական օթյակում վարպետի պաշտոնը մեկ ազատ որմնադրից մյուսին անցնելու մասոնական արարողակարգի մասին: Մաղթանքի խոսքում բարձրաստիճան մասոն Ա. Ֆեներճյանը, դիմելով իր իրավահաջորդին, ասել է. «Խոսքս ձեզ ուղղելով, Գերհարգելի եղբայր իմ, նախ՝ կուզեի, որ դուք նկատեք այս պաշտոնը ամենաբարձր պատիւը, զոր Եղբայրութիւնը կրնայ շնորհիլ իր օթեակին որեւէ եղբորը: Այն պատասխանատուութիւնները, որոնք կապուած են այս պաշտօնին հետ, շատ մեծ ու ծանր են եւ կը պահանջեն մտքի ու սրտի շատ մը յատկութիւններ: Յաջորդ առաջնորդ մը ըլլալու համար, պէտք է ունենալ շատ նուրբ ձիրքեր եւ բարեմասնութիւններ: Եւ ասոնց ամէնէն ցայտունները պէտք է ունենայ նոր Գերհարգելի վարպետը, որ է յարգանք, համարում եւ սէր իր եղբայրներուն վրայ: Մտքի յատկութիւններով եւ ի մասնաւորի սրտի յատկութիւններով, դուք պիտի յաջողիք շահիլ ձեր եղբայրներուն վստահութիւնը, հաւատարիմ, ուղղամիտ օժանդակութիւնը, գորովը եւ գուրգուրանքը: Ձեր պարտականութիւնը պէտք է ըլլայ լուսաւորել անոնց միտքերը ճշմարիտ

<sup>30</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 100:

<sup>31</sup> Ջորջ V (1865 / 1910-1936)-Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միապետ, բարձրաստիճան մասոն: 1932 թ. դեկտեմբերի 25-ին առաջին անգամ Օննոյան տոների կապակցությամբ ռադիոյով շնորհավորել է իր հայրենակիցներին, որի տեքստը գրել էր անգլիական նշանավոր գրող և մասոն Ռեդյարդ Կիպլինգը: Գերմանացի կոմպոզիտոր Պաուլ Հինդեմիթը թագավորի հիշատակին նվիրել է «Սգո երաժշտություն»: Տե՛ս Harold Nicolson. King George the Fifth; His Life and Reign, London, 1984, Kenneth Rose. King George V, London, 1984, Останенко Г. С. Наследники Королевы Виктории и первые британские монархи XX в: Эдуард VII и Георг V.- «Новая и новейшая история», 1999, № 6.

<sup>32</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 100:

իմաստութեամբ, խոհականութեամբ եւ չափաւորութեամբ; Եթէ ձեր դիրքը եւ վարմունքը այն բարձր արուեստին, զոր մենք ի գործ կը դնենք դարերէ ի վեր, ուղղիչ է, այն աստէն դուք պիտի ստանաք անհրաժեշտ եւ կարևոր ուժը այս ձեր ստանձնելիք պաշտօնին համար եւ կարող պիտի ըլլաք քողագերծ ընել գեղեցկութիւնը այն թաքուն վարդապետութեան, որ կը կազմէ հիմը Ազատ Ռոմնադրութեան:

Օթեակին յառաջադիմութիւնը ձեր վրայ դրուած պարտականութիւն մըն է: Ինչպէս որ մարդկային կեանքը կը կայանայ մարմին, մտքի եւ հոգիի աւելի մօտ գործակցութեան մէջ, նոյնպէս ալ օթեակի մը կեանքը կը կայանայ անոր նիւթական, բարոյական եւ հոգեկան սերտ գործակցութեան մէջ: Իւրաքանչիւր Ազատ Ռոմնադիրի պարտականութիւնն է աշխատել հանդարտօրէն իր անկիւնին մէջ՝ չլինելու համար այն վսեմ անտեսանելի տաճարը, ուր պիտի զարգանան իր մտային, բարոյական եւ հոգեկան ուժերը, որոնք միանալով բոլոր եղբայրներու միացեալ ջանքերուն, պիտի կրնան վերջնականապէս կերտել մարդկային կատարելագործութիւնը:

Դուք, նոր ընտրուած Գերհարգելի վարպետ, պիտի տաք այս խորունկ դասերուն իրական ցայտուն նշանակութիւնը ոչ միայն ձեր խօսքերով, այլ նաև ձեր կեանքով, վարքով ու բարքով: Գերհարգելի վարպետը միշտ պէտք է յիշէ, թէ երկրիս վրայ է եւ թէ անոր տաճարը անհուն եւ յաւիտենական է. թէ մարդու մը սիրտը խաղաղութեան, անբծութեան, ուժի, զուտի եւ յոյսի տաճարն է: Շատ բարձր է ձեզի յանձնուած վստահութիւնը եւ վստահ եմ թէ չպիտի ուզէիք եւ չպիտի համարձակէիք իբրեւ պարկեշտ մարդ, փախիլ այդ պարտականութիւններէն, որ ձեր ուսերուն վրայ դրուեցան այս երեկոյ, եղբայրութեան քուէներով: Սորվինք՝ ուսուցանելէ առաջ: Հնազանդինք՝ հրամայելէ առաջ: Լաւ հասկանանք՝ որեւէ խնդիր քննադատելէ առաջ: Ահա մի քանի ճշմարտութիւններ օթեակի մը յառաջադիմութեան համար: Ուրեմն, կը մաղթեմ, որ կարողանանք միացնել ձեր անձին մէջ մտատիպար գերհարգելի վարպետի բոլոր հատկութիւնները»<sup>33</sup>:

«Հայաստան» օթյակն իր աշխատանքները, ըստ Գերհարգելի Վարպետ Վահէ Հինդլյանի, դադարեցրել է 1925 թվականին՝ ունենալով գործունէության «փայլուն շրջանակ»<sup>34</sup>: Այս օթյակն էլ արժանացավ նոյն ճակատագրին, ինչ Զմյուռնիայի «Տիգրան» թիվ 1014, Կ. Պոլսի «Սեր» և

<sup>33</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 98-99:

<sup>34</sup> «Հայրենիք», 1955, սեպտեմբեր, թիվ 9, էջ 100:

Խարբերդի «Եփրատ» թիվ 1078 օթյակները: Ամեն անգամ Թուրքիայում ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հայ ազատ որմնադիրները հարկադրված էին դադարեցնել իրենց գործունեությունը: «Հայաստան» օթյակը թեպետ մասոնության երկնակամարում զիսաստդի պես փայլեց ու կարճատև կյանք ունեցավ, այնուամենայնիվ լուրջ հետք թողեց հայ ազատ որմնադրության պատմության մեջ:

#### **КОНСТАНТИНОПОЛЬСКАЯ ЛОЖА «АРМЕНИЯ» № 1185**

**Мовсисян Ф. В.**

После завершения Первой мировой войны в Турции стало возможным восстановление деятельности прежних масонских лож и создание новых лож. Воспользовавшись этим обстоятельством, группа армянских вольных каменщиков, которые до Первой мировой войны были членами английских и французских лож, в декабре 1918 года в Константинополе основала армянскую ложу № 1185 «Армения». В истории армянского масонства ложа «Армения» была единственной, которая состояла исключительно из армян, в том числе – священнослужителей; членство турок было запрещено. Свою деятельность ложа осуществляла под армянским триколором. Эта уникальная ложа, которая подобно комете засверкала на небосводе армянского франкмасонства, вынужденно прекратила свое существование в 1925 году.

**Ключевые слова:** Первая мировая война, Константинополь, масонство, «Великая ложа Шотландии», ложа «Армения», армянский триколор.

#### **“ARMENIA” LODGE № 1185 OF CONSTANTINOPLE**

**Movsisyan F. V.**

After the end of World War I it became possible to restart the activity of the Masonic Lodges in Turkey and establish new Lodges. Taking advantage of this opportunity, a group of free-masons, who had been members of the English and French Lodges before World War I, in December 1918, in Constantinople established “Armenia” Lodge No. 1185. In the history of the Armenian Masonry, “Armenia” Lodge was the only one of its kind which was staffed exclusively by Armenians, including clergymen. Turkish membership

was forbidden. The lodge was carrying out its work under the Armenian tricolour flag. This unique lodge, which shone like a comet in the Armenian Masonry, was forced to suspend its activity in 1925.

**Keywords:** World War I, Constantinople, the Masonry, “Scotland's Great Lodge”, “Armenia” Lodge, the Armenian Tricolour.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բինոն Ռ. Հայերու բնաջնջումը. Գերմանական մերժոտ - թրքական գործելակերպ: Թարգմ. Եդ. Չոբուրեան: Կ. Պոլիս: տպարան Կ.Արձագանգի: 1919: 60 էջ:
2. Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ: Գիրք առաջին: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1982: 357 էջ: Գիրք երկրորդ: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1983: 462 էջ:
3. Ղազարյան Հ. Ցեղասպան թուրքը: Պէյրուք: Տպարան «Համագգային»: 1968: 424 էջ:
4. Մելլան Զադէ Բ. Օսմանյան յեղափոխութեան մութ ծայքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները: Պէյրուք: «Տոնիկեան» տպարան: 1968: 372 էջ:
5. Ֆէնէրճեան Ա. Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ: Բոստոն: «Սէր» օթյակը: - «Հայրենիք» ամսագիր: 1955: սեպտեմբեր: թիվ 9: 112 էջ: 1955: դեկտեմբեր: թիվ 12: 112 էջ:
6. Ֆէնէրճեան Ա. Ազատ որմնադրութիւնը Մօսուաւր Արեւելքի մէջ: - «Կեանք եւ Արուեստ»: Տարեգիրք Ե տարի: Փարիզ: 1935: 81 էջ:
7. Յովհան Գիտակից սէր: - «Հայաստանի կոչնակ»: Նյու Յորք: 1924: 4 հոկտեմբերի: թիվ 40: էջ 1251-1277:
8. Кряжин В. Политические группировки Турции. Младотурки. //«Новый восток». № 1. 1923. 125 с.
9. Липский А. Что такое масонство? Масонство и масоны.// Сборник статей. 1994. Вып. 1. 122 с.
10. Морамарко М. Масонство в прошлом и настоящем. Пер. с ит. М. «Прогресс». 1990. 304 с.
11. Останенко Г. С. Наследники Королевы Виктории и первые британские монархи XX в: Эдуард VII и Георг V.// «Новая и новейшая история». 1999. № 6. 211 с.

12. Морган П. Секреты масонов. Пер. с англ. М. ООО Группа компаний «Рипол классик». 2008. 189 с.
13. Ридли Дж. Фримасоны. Люди, творящие мировую историю. Пер. с англ. М. ЭКСМО. 2007. 380 с.
14. Спаров В. Полная история масонства в одной книге. М. «Астрель СПб. 2010. 508 с.
15. Уайт А. Э. Новая Энциклопедия масонства. Пер. с англ. Санкт-Петербург-Москва-Краснодар. «Лань» издательство. 2003. 479 с.
16. Финдель И. История франк-масонства. Том 1. СПб. Типография Н. Скрятина. 1872. 404 с.
17. Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона, том XXXVI А, СПб. Академическое общество Брокгауз-Ефрон. 1902. 956 с.
18. Anderson J. The Constitutions of Free-Masons. London, Printed Anno. 1723. 92 p.
19. Armstrong H.C. Gray Wolf. The Life of Kemal Ataturk. New York. Capricorn Books. 1961. 208 p.
20. Boyajyan D. Armenia: The Case for a Forgotten Genocide, Westwood. New Jersey. Educational Book Grafters. 1972. 498 p.
21. Harold N. King George the Fifth; His Life and Reign. London. Constable. 1984. 570 p.
22. Heyd U. Foundations of Turkish Nationalizm. London. Hyperion Pr, 1950. 174 p.
23. Kenneth R. King George V. London. Weidenfeld and Nicolson. 1984. 514 p.
24. Robinson R. The First Turkish Republic. A Case Study in National Development. Cambridge. Harvard University Press. 1963. 367 p.
25. Walker Ch. Armenia: The Survival of Nation. New York. St. Martin's Press, 1980. 446 p.
26. [www.mediamax.am/am/news/interviews/10590](http://www.mediamax.am/am/news/interviews/10590)

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Մովսիսյան Ֆ. Վ. – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

*Վանաձորի պետական համալսարան*

*Էլ. փոստ [felmov@mail.ru](mailto:felmov@mail.ru)*

*Տրվել է խմբագրություն 10.10.2019*